ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/5

ք. Երևան «10» մայիսի 2018թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Մերանգուլյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **54 954 000 (Հիսունչորս միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 ՀՎՀՀ 02647057 Հ/Հ 900011054013 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Այյունեթվորքս» ՍՊԸ ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55 ՀՎՀՀ 02588485 Հ/Հ 1930042785480100 «Կոնվերս բանկ» ՓԲԸ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Սահակյան	**Վ.Մերանգուլյան**

«10» մայիսի 2018թ.

Հավելված N 1
2018թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72261180/4	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ	54 954 000	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում	Ներկայացված է տեխնիկական բնութագրում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ

ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ.Մերանգուլյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

CPV-72261180/4

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայությունների

Նպատակը
ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներդրվող «Նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման ծրագիր»-ի և այն համալրող ենթահամակարգերի և ծրագրերի սպասարկման ծառայությունների իրականացում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ
Ապահովել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում գործող «Նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման ծրագիր»-ի ստորև նշված ենթահամակարգերի անխափան աշխատանքը՝ էլեկտրոնային ծրագրերում կատարելով համապատասխան շտկումներ և փոփոխություններ դրանք համապատասխանեցնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված հանձնարարականներին, պահանջներին և օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև հարկային վարչարարության առանձին դրույթներին:

1. *ՀԴՄ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ «ՀԱՐԿԱՏՈՒ 3» ՀԱՄԱԿԱՐԳ*

- ՀԴՄ-ների գրանցման և գնման դիմումների մշակման ենթահամակարգ:
- ՀԴՄ ֆիսկալ հասույթների դիտման ենթահամակարգ:
- ՀԴՄ-ներով տպված կտրոնների դիտման ենթահամակարգ:

2. *ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ՀՆԵՀ)*

- Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին:
- Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին:
- Դիմում՝ ՀԴՄ գրանցումից հանելու մասին:
- Հարկ վճարողի Անձնական գրասենյակում ՀԴՄ-ների վերահսկման ենթահամակարգ:
- ՀԴՄ-ներում կիրառվող ապրանքների ցանկերի ստեղծման և կառավարման ենթահամակարգ:

3. *ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԴՄ-ՆԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՍԵՐՎԵՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ*

- ՀԴՄ ծրագրերի թարմացման կառավարման համակարգ:
- ՀԴՄ տվյալների փոխանակման ենթահամակարգ:
- Հարկային հաշիվների և էլեկտրոնային փաստաթղթերի ՀԴՄ-ներով գրանցված տվյալների փոխանակման ենթահամակարգ:
- ՀԴՄ-ի և անկանխիկ վճարումների իրականացման համակարգ ծրագրային փաթեթի միջև տվյալների փոխանակման մոդուլ:

4. *ՀԴՄ-ՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐՈՒՄ*

- ՀԴՄ հիմնական գործողություններ,
- ՀԴՄ շահագործման կանոնների ստուգման գործողություններ
- ՀԴՄ կտրոնների վրա տպվող ապրանքների կառավարում,
- Հարկային հաշիվների ենթածրագիր,
- Հաշվարկային փաստաթղթերի ենթածրագիր,
- ԱԱՀ վերադարձով հարկային հաշիվներ,
- Նույնականացման քարտերով ստորագրում:

5. *ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏ ՀԴՄ ԾՐԱԳՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳ*

- ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման մասով սպասարկում և խորհրդատվություն առևտրային ծրագրային ապահովման ստեղծող կազմակերպությունների համար,
- Պարբերական խորհրդատվական հանդիպումների կազմակերպում ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման արդյունավետության բարձրացման նպատակով:

6. *ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՄՊԱՍԱՐԿՈՂ ՍԵՐՎԵՐՆԵՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԼՐՈՒՄ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ԱՐԽԻՎԱՑՈՒՄ:*

7. *ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՄՊԱՍԱՐԿՈՂ ՍԵՐՎԵՐՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՄ ՍԵՐՎԵՐՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱԹԱՐՄԱՅՈՒՄ:*

Հիմնական մատուցվող ծառայություններ ըստ ռեսուրսների

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում գործող «Նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման ծրագիր»-ի ստորև նշված ենթահամակարգերի անխափան աշխատանքը՝ էլեկտրոնային ծրագրերում կատարելով համապատասխան շտկումներ և փոփոխություններ դրանք համապատասխանեցնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված հանձնարարականներին, պահանջներին և օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև հարկային վարչարարության առանձին դրույթներին, որոնց վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին պետք է տրամադրվի հաշվետվության՝ ամսական կտրվածքով մատուցված ծառայությունների ծավալի չափով՝ ըստ առանձին ենթահամակարգերի.

1. Հարկատու 3|ՀԴՄ-ների գրանցման և գնման դիմումների մշակման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 20 մարդ/ժամ:
2. Հարկատու 3|ՀԴՄ ֆիսկալ հասույթների դիտման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 30 մարդ/ժամ:
3. Հարկատու 3|ՀԴՄ-ներով տպված կտրոնների դիտման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
4. ՀՆԷՀ|Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին էջի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 10 մարդ/ժամ:
5. ՀՆԷՀ|Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին էջի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 10 մարդ/ժամ:
6. ՀՆԷՀ|Դիմում՝ ՀԴՄ գրանցումից հանելու մասին էջի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 10 մարդ/ժամ:
7. ՀՆԷՀ|Հարկ վճարողի Անձնական գրասենյակում ՀԴՄ-ների վերահսկման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
8. ՀՆԷՀ|ՀԴՄ-ներում կիրառվող ապրանքների ցանկերի ստեղծման և կառավարման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 30 մարդ/ժամ:
9. Տվյալների փոխանակում|ՀԴՄ ծրագրերի թարմացման կառավարման համակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
10. Տվյալների փոխանակում|ՀԴՄ տվյալների փոխանակման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 30 մարդ/ժամ:

11. Տվյալների փոխանակում|Հարկային հաշիվների և էլեկտրոնային փաստաթղթերի ՀԴՄ-ներով գրանցված տվյալների փոխանակման ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 20 մարդ/ժամ:

12. Տվյալների փոխանակում|ՀԴՄ-ի և անկանխիկ վճարումների իրականացման համակարգ ծրագրային փաթեթի միջև տվյալների փոխանակման մոդուլի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 10 մարդ/ժամ:

13. ՀԴՄ ծրագրային ապահովում|ՀԴՄ հիմնական գործողություններ ծրագրային փաթեթի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:

14. ՀԴՄ ծրագրային ապահովում|ՀԴՄ շահագործման կանոնների ստուգման գործողություններ ծրագրային փաթեթի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:

15. ՀԴՄ ծրագրային ապահովում|ՀԴՄ կտրոնների վրա տպվող ապրանքների կառավարում ենթահամակարգի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

16. ՀԴՄ ծրագրային ապահովում|Հարկային հաշիվների ենթածրագիր ծրագրային փաթեթի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

17. ՀԴՄ ծրագրային ապահովում|Հաշվարկային փաստաթղթերի ենթածրագիր ծրագրային փաթեթի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 100 մարդ/ժամ:

18. ՀԴՄ ծրագրային ապահովում|ԱԱՀ վերադարձով հարկային հաշիվներ ծրագրային փաթեթի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

19. ՀԴՄ ծրագրային ապահովում|Նույնականացման քարտերով ստորագրում ծրագրային փաթեթի ընթացիկ փոփոխությունների և ավելացումների իրականացում՝ ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը և տեխնիկական խորհրդատվություն: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 20 մարդ/ժամ:

20. Ինտեգրում առնտրային ծրագրերի հետ|ՀԴՄ ծրագրի արտաքին առնտրային ծրագրի հետ ինտեգրման մասով սպասարկում և խորհրդատվություն առնտրային ծրագրային ապահովման ստեղծող կազմակերպությունների համար: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

21. Ինտեգրում առնտրային ծրագրերի հետ|Պարբերական խորհրդատվական հանդիպումների կազմակերպում ՀԴՄ ծրագրի արտաքին առնտրային ծրագրի հետ ինտեգրման արդյունավետության բարձրացման նպատակով: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 10 մարդ/ժամ:

22. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները սպասարկող սերվերներում պարունակվող տեղեկատվության վերլուծություն, համալրում, ամբողջականության և անվտանգության ապահովում, արխիվացում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:

23. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները սպասարկող սերվերներում տեղադրված էլեկտրոնային համակարգի կամ սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:

Ծառայության մատուցման ժամկետը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ

ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ.Մերանգուլյան

Հավելված N 2
«10» մարտի 2018թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁՐ-18/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվինփ, ըստ ամիսների՝ ընդ որում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261180/4	4232	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների սպասարկման ծառայություններ				19 233 900	19 233 900	19 233 900	32 972 400	32 972 400	32 972 400	54 954 000	54 954 000	54 954 000	**54 954 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Աշխատակազմի գործառնական վարչություն
ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ.Մերանգուլյան

Հավելված 3
«10» մայիսի 2018թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«10» մայիսի 2018թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ..... -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և -ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ..... -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն